

Տպագրված է ընդամենը 6 օրինակ

Բաղկացած է 17 էջից

ՕՐԻՆԱԿ 3

ԳՐԱՆՅՎԱԾ Է

ՀՄՏԱՏԱՎԱԾ Է

«Փրայմ Ինշուրընս Բրոքերս» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
մասնակիցների 17.07.2008թ. կայացած
արտահերթ ժողովի կողմից
(արձանագրություն թիվ 27)



Ընկերության գործադիր տնօրեն՝

Ա. Յախշիբեկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 14.03.1997թ.
գրանցման թիվ 27311001758
վկայական 01Ա N 032261

Թիվ 001.2 փոփոխությունը գրանված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Նորք Մարաշ տարածքային
բաժնի կողմից



«ՓՐԱՅՄ ԻՆՇՈՒՐՆԱ ԲՐՈՔԵՐՍ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

թ. Երևան 2008թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ընդհանուր դրույթներ.....	3
2.	Ընկերության անվանումը.....	4
3.	Ընկերության գտնվելու վայրը.....	4
4.	Ընկերության գործունեության առարկան և նպատակները.....	4
5.	Ընկերության իրավական կարգավիճակը.....	5
6.	Ընկերության մասնակիցները, նրանց իրավունքներն ու պարտականությունները.....	5
7.	Ընկերության կանոնադրական կապիտալը.....	8
8.	Ընկերության գույքը, կապիտալը և շահույթը.....	9
9.	Ընկերության կառավարման մարմինը.....	11
10.	Ընկերության գործադիր մարմինը.....	14
11.	Ընկերության վերստուգողը (վերստուգիչ հանձնաժողովը).....	15
12.	Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը.....	16

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Փրայմ Ինշուրընս Բրոքերս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման պահից (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:

Ընկերությունն ունի հայերեն ֆիրմային անվանումը պարունակող կլոր կնիք և հայերեն ու այլ լեզուներով կնիքներ, դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ֆիրմային անվանումը պարունակող ձևաթղթեր, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու ֆիրմային այլ վավերապայմաններ:

Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Զաղաքացիական Օրենսգրքով, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետև՝ օրենք), Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

Եթե Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային պայմանագրերով սահմանված են այլ կանոններ, քան բովանդակում է սույն կանոնադրությունը, ապա համապատասխան դեպքերում կիրառվում են միջազգային պայմանագրերի կանոնները:

Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ընկերության անվանումն է.

հայերեն լրիվ՝ «ՓՐԱՅՄ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԲՐՈՔԵՐՍ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն

կրճատ՝ «ՓՐԱՅՄ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԲՐՈՔԵՐՍ» ՍՊԸ

ռուսերեն լրիվ՝ «ПРАЙМ ИНШУРАНС БРОКЕРС» общество с
ограниченной ответственностью

կրճատ՝ ООО «ПРАЙМ ИНШУРАНС БРОКЕРС»

անգլերեն լրիվ՝ “Prime Insurance Brokers” Limited Liability Company

կրճատ՝ “Prime Insurance Brokers” LLC

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

Ընկերության իրավաբանական հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մայաթ-Նովա պող. 21, բն. 15:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության գործունեության նպատակը տնտեսական գործունեություն իրականացնելու
ճանապարհով շահույթի ստացումն է:

Ընկերության գործունեության հիմնական տեսակն է՝

- ապահովագրական միջնորդային գործունեություն

Օրենքով սահմանված այլ գործունեության տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել
միայն լիցենզիա (հատուկ թույլտվություն) ստանալու դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից
կամ նրանում նշված ժամկետում:

Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով սահմանված
դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԳԱՎԻՃԱԿԸ

Պետական գրանցման պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Ընկերությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության բանկային հիմնարկություններում՝ հաշվարկային հաշիվներ (դրամով, տարադրամով):

Ընկերությունը կարող է ստեղծվել նոր ընկերության հիմնադրման, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման միջոցով:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անձը համարվում է Ընկերության մասնակից, իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում գրանցվելու պահից:

Մասնակիցները կարող են փոխվել Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների ընդունման, ազատման, հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու դեպքում:

Ընկերությունը չի կարող որպես միակ մասնակից ունենալ մեկ անձից կազմված այլ տնտեսական ընկերություն:

Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

- Օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը՝ ներկա գտնվել ընդհանուր ժողովին, հանդես գալ առաջարկություններով, մասնակցել օրակարգային հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս,
- տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին՝ գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման,

հաշվետվության, Ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ,

- ստանալ ընկերության գործունեությունից ստացվող շահույթի (դիվիդենտի) մասը,
- Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնեմասերի ձայների չափով,
- Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ շահույթի իր մասը,
- Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը,
- ցանկացած պահին դուրս գալ ընկերությունից (անկախ մյուս մասնակիցների համաձայնության),
- հայցով դիմել դատարան՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց,
- օգտվել Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

- սույն կանոնադրությամբ կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշման սահմանված կարգի համաձայն՝ կատարել ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում,
- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,
- կատարել ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,
- պահպանել սույն կանոնադրության դրույթները:

6.4. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը.

6.4.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝

Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն:

Եթե Ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այդ իրավունքն օգտագործել են մասամբ, ապա Ընկերությունն ունի իրավունք այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:

Մասնակիցների, ինչպես նաև Ընկերության կողմից իրենց վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում բաժնեմասերը կարող են օտարվել երրորդ անձանց:

Օրենքով նախատեսված բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:

6.4.2. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել բաժնեմասի չաշխված մասի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

6.4.3. Նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետ սահմանվում է մեկ ամիս:

6.5. Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են Ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին միայն Ընկերության մնացած բոլոր մասնակիցների համաձայնությամբ: Բաժնեմասն անցնելու համար համաձայնություն չտալու, ինչպես նաև ժառանգի (իրավահաջորդի) բաժնեմասից հրաժարվելու դեպքում դրա արժեքի վճարումը կատարվում է սույն կանոնադրության 6.7 կետում սահմանված կարգով:

6.6. Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) Ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել Ընկերության մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում է կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը:

6.7. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է Ընկերությանը:

Ընկերությունից դուրս եկով մասնակցի հետ հաշվարկները կատարվում են հետևյալ կարգով.

- վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարման մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը,
- բաժնեմասի արժեքը որոշվում է դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին՝ Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա,
- մասնակցին նրա համաձայնությամբ կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք՝ ընդհանուր ժողովի որոշմամբ,
- եթե Ընկերության կանոնադրական կապիտալում որպես ավանդ ներդրվել է գույքի օգտագործման իրավունք, ապա Ընկերությունը պահպանում է մինչև օգտագործման իրավունքի ժամկետի ավարտը,
- մասնակիցը պարտավոր չէ վերադարձնել իր կողմից բարեխղճորեն ստացված շահույթը:

Ընկերությունը պարտավոր է մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում:

Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր սեփականությունը հանդիսացող բաժնեմասը (դրա մասը) գրավ դնել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների և երրորդ անձանց: Գրավի իրավունքը ծագում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրավի իրավունքի գրանցման պահից: Գրավ դրված բաժնեմասի (դրա մասի) վրա բռնագանձում տարածելու դեպքում Ընկերության մյուս մասնակիցները և Ընկերությունը օգտվում են բաժնեմասը (դրա մասը) ձեռք բերելու նախապատվության իրավունքից Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԸ

7.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 100 (մեկ հարյուր) բաժնեմասի, յուրաքանչյուրը 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը:

Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց ցանկը և յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասի չափը (բաժնեմասը) բերված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածում:

7.2. Ընկերության մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերը օտարել սույն կանոնադրության 6.4. կետով սահմանված կարգով:

7.3. Ընկերությունը կարող է փոխել կանոնադրական կապիտալի մեծությունը: Այդ մասին որոշումն ուժի մեջ է մտնում պետական ռեգիստրում համապատասխան փոփոխությունների պետական գրանցման պահից:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են Օրենքով:

Ընկերությունը, իսկ Օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը:

7.4. Ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնաբաժնեմասի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավումը կատարվում է Օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԿԱՊԻՏԱԼՆԵՐՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

Ընկերությունը հանդիսանում է սեփականատեր՝

- Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) ավանդների և դրանց հաշվին ստեղծված գույքի,
- Ընկերության տնտեսական գործունեության հետևանքով արտադրած արտադրանքի և ձեռք բերած գույքի,
- ստացված եկամուտների,
- գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերված գույքի:

Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

Ընկերության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Ընկերության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում է օրենքով:

Ընկերության մասնակցի ներդրումը կարող է լինել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ:

Ներդրվող գույքի արժեքը որոշվում է Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) միջև համաձայնությամբ և ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման (աուդիտի):

Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) կամ ընկերության մեջ ընդգրկվող երրորդ անձանց կողմից ներդրվող ոչ դրամային ավանդների դրամական գնահատականը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից՝ միաձայն կարգով: Եթե ընկերության մասնակցի ոչ դրամային ավանդով վճարվող բաժնեմասի անվանական արժեքը (անվանական արժեքի մեծացումը) ավելի է ընկերության պետական գրանցման համար փաստաթղթեր ներկայացնելու պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 500-ապատիկից, ապա նման ավանդը պետք է գնահատվի անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից:

Կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասը գնահատվում է տեղական արժույթով:

Եթե գույքը, նյութական արժեքները, ֆինանսական և այլ ռեսուրսները փոխանցվում են Ընկերությանը միայն օգտագործման նպատակով, ապա ներդրման չափը և համապատասխանաբար մասնակից-վարձատուի բաժնեմասը որոշվում է ելնելով գույքի օգտագործման դիմաց տրվող վարձակալական վճարից: Ընկերությունը ժամանակավոր օգտագործման տրված գույքի պատահական կորստի կամ վնասման ռիսկը կարգավորվում է առանձին պայմանագրով:

Ընկերությունում ստեղծվում է պահուստային կապիտալ մասնակիցների ժողովի կողմից որոշված չափով: Այս կապիտալի ձևավորումը իրականացվում է շահույթից կատարվող տարեկան մասհանումների միջոցով մինչև նախատեսված չափերին հասնելը: Պահուստային կապիտալի միջոցների ծախսման կարգը որոշվում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

Սահմանված կարգով առաջացող մաքուր շահույթի բաշխումը Ընկերության մասնակիցների միջև իրականացվում է կանոնադրական կապիտալում

մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆԸ

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովներում քվեարկությունների ժամանակ Ընկերության մասնակիցներն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:

Ընկերության մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության գործադիր մարմնի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան չորս ամիս անց: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների հերթական ընդհանուր ժողով՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար:

Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության գործադիր մարմնի կողմից և Ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ դա են պահանջում ընկերության և նրա մասնակիցների շահերը:

Ընկերության մասնակիցներն իրավասու են մասնակցել ժողովին անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Ընկերության մասնակիցների ներկայացուցիչները պետք է ներկայացնեն իրենց լիազորությունները հաստատող փաստաթղթեր: Ընկերության ընդհանուր ժողովը ընտրում է իր նախագահին:

Մասնակիցների ժողովի կողմից նախագահին կարող են տրվել ՀՀ օրենքներին և իրավական ակտերին չհակասող լիազորություններ՝ ժողովների միջև ընկած ժամանակահատվածում իրենց շահերը ներկայացնելու համար:

Ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.

Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

Ընկերության կողմից բաժնեմասի (բաժնեմասերի) ձեռքբերումը և դրանց իրացումը օրենքով սահմանված դեպքերում,

Ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունելը,

Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը, լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,

Կազմակերպությունների (այդ թվում դուստր և կախյալ ընկերությունների) հիմնադրումը,

Կազմակերպություններում (այդ թվում դուստր և կախյալ ընկերություններում) մասնակցության մասին որոշումների ընդունումը,

Ընկերության գործադիր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև ընկերության գործադիր մարմնի լիազորությունները կառավարիչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) տալու հարցերը,

Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների կամ վերստուգողի ընտրությունը և նրանց կամ նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցում,

Ընկերության աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,

Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,

Ընկերության շահույթն ու վնասները ընկերության մասնակիցների միջև բաշխման մասին որոշման ընդունումը,

Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը,

Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ, (որոնց արժեքը գերազանցում է գուտ ակտիվների 1/4-ը) կատարելու մասին որոշման ընդունումը,

Ընկերության հաստիքացուցակի ընդունում,

Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Ընկերության ներքին փաստաթղթերի) ընդունումը,

Դեկլավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Ընկերության ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև օրենքով և սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

Սույն կանոնադրության 9.3. կետի բոլոր ենթակետերով (բացի 9.3.10, 9.3.13, 9.3.19, ենթակետերի) սահմանված հարցերը հանդիսանում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցեր և չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմնին: 9.3. կետի բոլոր ենթակետերում (բացի 9.3.10, 9.3.13, 9.3.19, ենթակետերի) նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության բոլոր մասնակիցների միաձայնությամբ: Մնացած հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը իրավագոր է (քվորում ունի), եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների թվի կեսից ավելին տնօրինող մասնակիցները: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (եթե քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը) ժողովը իրավասու է բոլոր մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայության դեպքում:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի լուծումը կատարվում է ժողովի նիստում՝ օրակարգի հարցերի քննարկման, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով մասնակիցների համատեղ ներկա գտնվելով կամ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Այդ դեպքում որոշման նախագիծը ուղարկվում է մասնակիցներին, որոնք պետք է գրավոր հայտնեն իրենց կարծիքը: Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

Ընկերության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պահանջելու հարցերի քննարկում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում այն պայմանով, որ ներկայացված լինի ժողովը սկսվելուց առնվազն 10 օր առաջ:

Ընկերությունը կարող է նախատեսել խորհրդի ձևավորում, որի իրավասության սահմանները որոշվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի նիստով:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը, որն ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով: Ընկերության և գործադիր տնօրենի միջև պայմանագիրը ստորագրվում է գործադիր տնօրենին ընտրած ընդհանուր ժողովի նախագահող անձի կամ ընդհանուր ժողովի կողմից լիազորված անձի կողմից (եթե տվյալ ընդհանուր ժողովում նախագահել է գործադիր տնօրենը):

Գործադիր տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից: Գործադիր տնօրենը հրավիրում է Ընկերության մասնակիցների հերթական ու արտահերթ ընդհանուր ժողովները, կազմակերպում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումների կատարումը, հաշվետու է ընդհանուր ժողովին և իրավունք չունի մասնակիցների համար պարտադիր որոշումներ կայացնելու:

Ընկերության գործադիր տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության կամ Ընկերության մասնակիցների պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը պատճառած վնասները: Ընկերությանը պատճառած վնասների հատուցման հայցով դատարան դիմելու իրավունք ունի Ընկերությունը կամ նրա մասնակիցը:

- Ընկերության գործադիր տնօրենն իր իրավասության սահմաններում՝
- առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,
- տալիս է լիազորագրեր՝ Ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
- մասնակիցների ժողովի կողմից հաստատված հաստիքացուցակի համաձայն՝ տալիս է հրամաններ Ընկերության աշխատակիցների պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
- իրականացնում է ՀՀ գործող օրենսդրությանը չհակասող, Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Ընկերության ընդհանուր ժողովի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

Ընկերությունն իրավասու է իր գործադիր մարմնի իրավասությունները փոխանցել կառավարիչին (առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր):

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ (ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ)

Ընկերության վերստուգողը կամ վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով:

Վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ կամ Ընկերության մասնակիցներից յուրաքանչյուրի պահանջով:

Վերստուգողն իրավունք ունի Ընկերության պաշտոնատար անձանցից պահանջելու իրեն ներկայացնել բոլոր անհրաժեշտ նյութերը, անհրաժեշտ բացատրություններ՝ գրավոր կամ բանավոր ձևով:

Ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան, Հայաստանի Հանրապետության ֆինանսական և այլ լիազորված մարմինների ծառայությունների կողմից իրենց իրավասության սահմաններում: Վերստուգողը պարտավոր է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում կատարել ոչ ուշ, քան տարին մեկ անգամ:

Վերստուգողը ստուգումների արդյունքներն ուղարկում է Ընկերության ընդհանուր ժողով:

Վերստուգողն ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության Ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից: Վերստուգողը պարտավոր է պահանջել գումարելու արտահերթ նիստ, եթե գտնում է, որ Ընկերության շահերին էական սպառնալիք է առաջացել:

Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Ընկերությունն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Ընկերության կամ նրա մասնակիցների հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ ատղիտորի (արտաքին ատղիտ):

Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգողի ֆունկցիաները կարող է իրականացնել վարձատրվող վերստուգողը, որը պետք է հաշվետու լինի միայն ընդհանուր ժողովին:

Որպես վերստուգող կարող է լինել նաև Ընկերության մասնակից չհանդիսացող անձը: Գործադիր տնօրենը չի կարող լինել վերստուգող: Վերստուգողը կարող է միաժամանակ սպասարկել մեկից ավելի իրավաբանական անձանց:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Ընկերությունը, նրա մասնակիցների միաձայն որոշմամբ, կարող է կամովին լուծարվել կամ վերակազմակերպվել: Ընկերությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Եթե Ընկերության գույքը անբավարար է Ընկերության պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով: Ընկերության վերակազմակերպման ու լուծարման կարգը և պայմանները սահմանվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:

Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել բաժնետիրական ընկերության:

Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

**«Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի
կանոնադրության հավելված**

**«ՓՐԱՅՍ ԻՆՇՈՒՐՆՍ ԲՐՈՔԵՐՍ»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
մասնակիցների ցուցակ**

Մասնակցի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը	Բաժնեմասը /ՀՀ դրամ/	Բաժնեմասի չափը	Ստորագրություն
<p>1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արտավազ Աշոտի Յախշիբեկյան անձնագիր՝ AG 0690753, տրված 27.05.2006թ. 011-ի կողմից ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 72., բն. 4</p>	50 000	50%	
<p>2. Հայաստանի Հանրապետության քաղաքացի Սամվել Ալեքսանդրի Հակոբյան անձնագիր՝ AH 0425208, տրված 27.09.2007թ. 070-ի կողմից ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Տիգրան Մեծի 8</p>	50 000	50%	